ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՇՏԿՈՒՄՆԵՐ

Ս. Տ. ՍԱՂՈՒՄՅԱՆ, Ա. Մ. ԵՆԳՈՅԱՆ

Ճարտարապետական ինքնատիպ հուշարձան է Հին Ղրիմ քաղաքից 3,5 կմ հարավ-արևմուտք գտնվող ս. Խաչ վանքը, որը հինգուկես հարյուրամյակ շարունակ եղել է ղրիմահայության հոգևոր, մշակութային ու կրթական կենտրոններից մեկը։ Հայ գիտնականների ու գրիչների տքնանքով այստեղ ստեղծվել են իմաստասիրական գրքեր, ընդօրինակվել բազմաթիվ ձեռագրեր։

Ե՞րբ է կառուցվել այս հաստատությունը։ Վանքի եկեղեցու թմբուկի 12 նիստերին փորագրված շինարարական միատող արձանագրությունն առաջինը հրատարակել է Մ. Բժշկյանը, ըստ որի՝ այն կառուցվել է 1338 թ., վանքի «ծառա» Հովհաննես կրոնավորի և «հարազատ եղբարց նորին» սատարությամբ[1]։

Հետագա բանասերները աներկբայորեն ընդունել են այս թվագրությունը։ Մ. Բժշկյանից է օգտվել նաև Խ. Ստեփանեն, որը եղել է ս. Խաչ վանքի առաջնորդը[2]։ Մ. Բժշկյանի վերծանությունն այնուհետև ընդունել են Ք. Հովհաննիսյանը[3] և Վ. Միքայելյանը[4]։

Բարեբախտաբար, արձանագրությունն առ այսօր պահպանվում է անեղծ ու ամբողջական, և մեզ հետաքրքրող հատվածն ընթերցվում է.

ՅԵՐԵՔ ՀԱՐԵԻՐ ԵՒ ՀԱՋԱՐԻՆ
ՅՈՒԹ ԵՒ ՅԻՍՈՒՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ (1358 թ.)[5]

Պարզվում է, որ Մ. Բժշկյանը յիսուն բառը կարդացել է յերեսուն, որից և առաջացել է վրիպումը։

Ղրիմի ս. Խաչ եկեղեցու և սեղանատան կառուցման մասին գոյություն ունի հավաստի մի փաստ ևս։ Վանքի միաբաններից է գրիչ Հակոբը, որն իր գրառած մի հիշատակարանում գրում է՝ միաբանության համար 1377 թ. «շինեցի զսեղանատունս և զտօրմիթորս», իսկ 1360 թ.՝ «շինել էի զեկեղեցին ի պատիւ սուրբ Նիկոլաոսի սքանչելագործ հայրապետին»[6]։

---

1 *Մ. Բժշկեանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս, Վենետիկ, 1830, էջ 324։*

2 *Խորեն Ստեփանե, Ղրիմի սուրբ Խաչի վանք, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 4—5։*

3 Хр. Кучук-Иоаниесов, Старинные армянские надписи и старинные рукописи в пределах юго-западной Руси и в Крыму, стр. 40.

4 *Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 321։*

5 *Մ. Բժշկյանի վրիպումը մեզանից առաջ նկատել է Աս. Մնացականյանը։ Հմմտ. Յու. Թամանյան, Ղրիմի ս. Խաչ վանքը («Էջմիածին», 1969, է—Ը, էջ 59),* Г. Григорян, Новые данные об армянских надписях Крыма *(«Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 298)։ Հուշարձանի լուսանկարները մեզ են տրամադրել ընկ. Յու. Թամանյանը և Գր. Գրիգորյանը, որի համար հայտնում ենք շնորհակալություն։*

6 *«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 517։*

Եկեղեցու, ինչպես և սեղանատան կառուցումը հիշատակարանում երկու տարի ուշ է, բայց հայտնի է, որ Ղրիմում ընդօրինակված ձեռագրերը թվագրված են հայոց փրկչական և ոչ թե հռոմեական տոմարով։ Հիշատակարաններում օգտագործված տարբեր տոմարների համադրությամբ այս խնդիրը աներկբայորեն լուծել է ակադեմիկոս Լ. Խաչիկյանը[7]։



Նկ. 1. Ս. Խաչ վանքի թմբուկի արձանագրության թվակիր հատվածը

Այսպիսով, Ղրիմի ս. Խաչ վանքի ս. Նշան եկեղեցին, ուր պահվել է Նիկողայոս սքանչելագործի մասունքներից, կառուցվել է 1358 թ., Հակոբ գրչի ջանքերով, միաբանների աջակցությամբ և Հովհաննես կրոնավորի մեկենասությամբ։ Հիշատակարանից պարզվում է, որ սեղանատունը 1375 թ. սեպտեմբերին կառուցել է նույն Հակոբը։

Թեոդոսիայում անցյալում եղել է շուրջ երեք տասնյակ հայկական եկեղեցի։ Ներկայումս այստեղ պահպանվում են վեց ամբողջական և մեկ կիսավեր եկեղեցի։ Քաղաքի մայր (ս. Սարգիս) եկեղեցու ուրույն հատակագիծը, որմնանկարները, քանդակազարդ ավազանները, փայտակուռ դռներն ու խոյակները արժանի են մասնագիտական ուշադրության։

Եկեղեցու պատերին ագուցված մաշված խաչքարերն, հարկավ, նրա հնության կռվան չեն։ Մինչդեռ Քուշներյանը գրում է, որ ս. Սարգսի «որմին մէջ զետեղված և մաշած խաչքարինք կհաստատեն եկեղեցվոյն բազմադարյան հնությունը, թերևս Գենուացվոց ի Կաֆա գալեն ևս շատ առաջ»[8], այսինքն XIII դ. առաջ։ Նախ՝ հին խաչքարերը կարող էին ագուցվել նաև հետա-

7 Նույն տեղում։

8 Հ. Քուշներյան, Պատմություն գաղթականության Խրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 104։

գայում կառուցված շենքին և ապա՝ ս. Սարգիս եկեղեցու պատերին առկա մաշված խաչքարերը նրա արևմտյան մուտքից աջ և ձախ ագուցվածներն են, որոնցից ձախակողմյանի թիվը լրիվ եղծված է (եթե եղել է), իսկ աջակողմյան խաչքարը հորինվել է ՌՄ(=1751) թվականին՝ Ասլանի որդի Գևորգի հոգու փրկության համար։

Հուշարձանից 20 մ արևմուտք «հայազն նկարչապետ Յովհաննէս Այվազովսկու» աճյունն է։ Մեծ ծովանկարիչի և Թեոդոսիայի հայոց նպաստով 1888 թ. ս. Սարգիս տաճարը «վերանորոգեցաւ յաւերակաց»։ Բացի այդ՝ XVII դ. հետո Հայաստանում կառուցված բազմահարկ զանգակատների նմանությամբ ու Հ. Այվազովսկու նախագծով կառուցվել է նույն եկեղեցու կրկնահարկ զանգակատունը[9]։

Հետաքրքիր են նաև համալիրի որմերի ու փայտե խոյակների վրա առ այսօր պահպանվող շուրջ 80 հայկական արձանագրությունները։ Ամբողջական ու թերի այս վավերագրերի մեծ մասը փորագրված են քառանկյունի մարմարե սալերի վրա՝ ագուցված (թե՛ ներսից և թե՛ դրսից) եկեղեցու և զավթի պատերին և ունեն գիտական բացառիկ արժեք։ Արձանագրությունները գրված են պարզ, վարպետորեն, մեր վիմագրերին հարազատ կապգրերով ու սղումներով։

Տակավին XIX դ. դրանք գրավել են հետազոտողների ուշադրությունը։ Գավթի ներսի արձանագրություններից մեկը Ք. Հովհաննիսյանը ընթերցել է. «Թարեխաւս է սուրբ խաչս Մկրտիչ մանուկին, որ ընկղմեցաւ ի մէջ ծովու թվականի ՆՂԶ սկսեալ ամին»[10]։ Ակադեմիկոս Հ. Օրբելին, առաջնորդվելով XI և հետագա դարերի հայերեն արձանագրությունների լեզվա-ոճական առանձնահատկություններով (և այլ գործոններով), Քուչուկ-Հովհաննիսյանի հրատարակած այս փոքրիկ արձանագրության թվականը կասկածելի է համարել և առաջարկել արձանագրության ՆՂԶ (=1047) ընթերցումը սրբագրել «թվականին ՌԶ» (1557)՝ Ն-ն համարելով թվական բառի վերջին տառը, իսկ Ռ-ն՝ Ղ-ի շփոթ[11]։ Նման ընթերցմամբ թույլ է տրվել վաթսունութ տարվա անճշտություն, մինչդեռ արձանագրության առաջին հրատարակչի մոտ առկա է ավելի քան չորս դարի անճշտություն, որը ընդունվել է հետագա ուսումնասիրողների կողմից և նոր եզրակացությունների առիթ դարձել[12]։

1969 թ. այցելության ժամանակ մեզ չհաջողվեց ս. Սարգիս եկեղեցու վրա գտնել ոչ միայն XI, այլև հետագա երկու դարերին վերաբերող և ոչ մի արձանագրություն։ Թեոդոսիայի հուշարձանների մեզ հայտնի ավելի քան 100 վիմագրերից շուրջ 60-ը թվագրված են, և 3 հնագույնները վերաբերում են XIV, 26-ը՝ XV, 11-ը՝ XVI, 10-ը՝ XVII և մնացածը՝ XVIII—XX դարերին։

---

9 Զանգակատան նախագիծը ցուցադրված է Հ. Այվազովսկու տուն-թանգարանում (Թեոդոսիա)։ Առաջին հարկի հարթ թաղը հիշեցնում է Կոշի ս. Ստեփանոս եկեղեցու ձախ խորանի ծածկը։

10 Хр. Кучук-Иоаннесов, նշվ. աշխ., էջ 35։

11 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 214։

12 Хр. Кучук-Иоаннесов, նշվ. աշխ., էջ 35, Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 46—47։

Արձանագրությունը ընթերցվում է.

ԲԱՐԵԽԱԻՍ (Է) ՍԲ ԽԱՉՍ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԿԱ
ԻԱԴԻՆ, ՈՐ ԸՆԿՂՄԵՑԱԻ Ի ՄԷՋ ԾՈՎԻՆ
Ջ ԹՎԿՆԻՆ, ԼԸ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ։

Նկ. 2. 1489 թ. արձանագրությունը (լուսանկարը և գծանկարը)

Դժվար չէ նկատել, որ Ք. Հովհաննիսյանը օտարել է արձանագրության երրորդ տողի առաջին տառը (Ջ), այսինքն՝ թվականի հարյուրավորը։ Եվ քանի որ թվական բառին տրամաբանորեն պետք է հետևեր նաև թիվը, ուստի նա ԹՎԿՆԻՆ (թվականին) բառի վերջին Ն-ն միացրել է տասնավոր ու միավոր թվատառերին (ԼԸ), բայց ընթերցելով ՂՋ և անտեսելով բառանջատման կետերը ու այս կերպ ստացել «թվականի ՆՂՋ»։

Մեր վերծանությամբ՝ Մկրտիչ սարկավագը (ոչ թե մանուկը) մահացել է (խեղդվել ծովում) ոչ թե ՆՂՋ (=1047), այլ ՋԼԸ (= 1489) թվականի սկզբին։ Թերևս կարելի է ենթադրել, որ Մկրտիչը մահացել է Ջ(=1451) թվականին, իր կյանքի ԼԸ(38-րդ) տարվա սկզբում, սակայն նման երկմտանքի պատճառ չկա, քանզի Ղրիմի արձանագրությունների մեջ հաճախ են հանդիպում նման թվագրումներ, որոնք մարդկանց տարիքի հետ կապ չունեն։ Նույն եկեղեցու հյուսիսային պատին դրսից փորագրված արձանագրությունը

Նկ. 3. 1526 թ. արձանագրությունը (լուսանկարը և գծանկարը)

Ք. Հովհաննիսյանը վերծանել է «Ցիշատակ է սուրբ Նշանքս նահատակի Գորգին և եղբօրն Ստեփանին, թվ. ՈՂԲ»[13],

Գորգի և իր եղբայր Ստեփանոսի արձանագրությունն իրականում ունի հետևյալ պատկերը.

---

13 Хр. Кучук-Иоаннесов. Նշվ. աշխ., էջ 35։

ԹՎ. ՋՀԵ (1526)։
Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ
Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս
Յ[Ի]Շ[ԱՏԱԿ] Է Ս[ՈՒՐ]Բ ՆՇ
ԱՆՔՍ
ՆԱՀԱ
ՏԱԿ Գ[Ր]
ԻԳՈՐ
ԻՆ ԵՒ [Ղ]
ԲՕՐՆ՝ [Ս]
ԱՐԳ [Ս]
ԻՆ ԵՒ [ԾՆ]
ՈՂԱ [ՅՆ]։

Այս դեպքում ևս շփոթված են անձնանունները. Գրիգորն ու Սարգիսը դարձել են Գորգի և Ստեփանոս։ Բացի այդ՝ Ք. Հովհաննիսյանի տեսադաշտից վրիպել է արձանագրության առաջին մասը, որը հմտորեն տեղադրվել է առաջին խաչաքանդակի վրա և միանգամից անտեսվել կարևորը՝ թիվը։ Բավական է գիտել արձանագրության գրչագիրը, համոզվելու, որ Ք. Հովհաննիսյանը վերջին ԵՒ ԾՆՈՂԱՅՆ կապակցությունը[14] *սխալ վերծանելով ըստացել է ՈՂԲ (= 1243)։ Ուսումնասիրողի ուշադրությունից վրիպել է իրական թիվը և որոնվել այնտեղ, ուր կարող էր լինել այն։ Բացի այդ, չէ՞ որ «սուրբ նշանքս» կապակցությունը հոգնակի է, և արձանագրությունն ընդօրինակողը պետք է նկատեր նաև առաջին խաչաքանդակն ու արձանագրության առաջին մասը։ Այսուհանդերձ՝ ԵՂԲՕՐՆ բառի ուղղագրությունից երևում է, որ այս արձանագրությունը չէր կարող XIII դ. վիմագրված լինել, քանի որ XIII դ. աւ երկհնչյունի փոխարեն օ չէր օգտագործվում ու այն մասնավոր կիրառություն պիտի ստանար երկու հարյուրամյակ հետո։*

Ս. Խաչ վանքի և ս. Սարգիս եկեղեցու հրատարակված այլ արձանագրությունների մեջ ևս կան էական անճշտություններ։ Այս հուշարձանների արձանագրությունների պատշաճ վերծանումն ու հրատարակումը կարևոր նպաստ կլինի հայագիտությանը։

ЭПИГРАФИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ

С. Т. САГУМЯН, А. М. ЕНГОЯН

Резюме

На основе строительной надписи, опоясывающей барабан купола монастыря Сурб Хач (Святой Крест) в Крыму, и письменных сведений уточнено, что церковь Святой Ншан была построена не в 1338, а в 1358 г.

---

14 *Ի դեպ, նախավերջին տողի ԾՆ և վերջին տողի ԱՅՆ հնչյունախմբերը եղծված են, սակայն կարելի է վերականգնել։*

Исследователи в прошлом вследствие ошибки, допущенной при чтении одной из надписей внутренней стены притвора церкви Св. Саркиса в Феодосии, считали датой смерти дьякона Мкртыча (а не младенца) 1047 г. В действительности же в надписи указан 1489 г.

Уточнена также дата надписи на северной стене (с наружной стороны) той же церкви и дата создания хачкара в память Григора нахатака (мученика), его брата Саркиса и их родителей. Последний был создан не в 1243 (ՈՂԲ), а в 1526 (ՋՀԸ) г.